# ԳԼՈՒԽ ԺԱ.

| 1857էն սկսեալ | ԱՄԵՐԻԿԱ | մինչեւ 1912 |
|---|---|---|

**ՆԻՒ ԵՕՐՔ** (հին ուղղագրութեամբ ՆՈՐ ԵՕՐՔ). — Միացեալ Նահանգաց այս հոծ ոստանին մէջ առաջին անգամ ոտք դնող Հայը եղած է Ոսկանեան Խաչատուր պատանին՝ բարձր ուսում ստանալու համար, 1834 ին: Այս այն անձն է որ Պոլիս դարձին՝ հրատարակած է «Ազդարար Բիւզանդեան» թերթը (1840): Իրմէ վերջ բաւական թւով Հայեր գաղթած են Նոր Աշխարհ՝ համալսարանական կրթութիւն առնելու համար: ** Բողոքական Միսիոնարներու հաւատափիւռ առաքելութիւններ — ինչպէս Կալկաթայի, Լօնտոնի, Մալթայի, Իզմիրի և Պոլսոյ մէջ — Գոլոմպոսի գտած երկի՛րն ալ հաստատեցին հայ մամուլը՝ Ս. Գիրքը ժողովրդականացունելու համար մեր ազգին մէջ եւս, անոր՝ մանաւանդ աշխարհաբա՛ր հրատարակութիւններով: Այսպէս, ասկէ կէս դար առաջ, Նիւ Եօրք մուտ գործեցին Մեսրոպեան ձուլածոյ տառեր և հիմնուեցան հետագայ երկու տպարանները:

406. **Ած․աշունչի Ընկ․եանը**, որ 1857ին տպեց **Աշխարհացոյցը** [Ա. տիպն Իզմիր՝ 1839 ին], 1859 ին՝ **Ա.ծ.աշունչ** գիրք Հին և Նոր Կտակարանաց [Բ. տիպն անդ 1867ին], 1862 ին՝ **Նոր Կտակարան** (նաեւ 1864, 866, 867), 1864 ին՝ Գիրք **Սաղմոսաց**, 1869 ին **Աւետարան** բստ Մարկոսի (աշխարհաբար լեզուով):

407. **Ամերիկ․այի Տետրակի Ընկ․եանը** որ 1860 ին և 79 ին երկիցս լոյս ընծայեց **Հաւատունք** վկայութեանց Ս. Գրոց [Ա. և Բ. տիպերն Իզմիր՝ 1849-52], **Քրիստ.** վարդապետութիւն (1861), Քրիստոփանոսին և Քրիստոնէին ճամբորդութիւնը [Ա. տիպն Իզմիր՝ 1843], **Առաջին** դասագիրք մանկանց (1869), **Աւետարանական** քարոզներ, **Ընտանեան** առողջապահութեան վերաբերեալ խրատներ, **Սիրոյ խրատներ** «Տաճկաս.ի քրիստ. կնիկներուն համար» հեղ. վարժուհի Մ. Ե. Ուեսթ, սահուն աշխարհաբարով՝ բարոյականի պատուական գիրք մը, 230 էջ, խոշորագիր (1874), **Քրիսթեան** բալիմարը (1877), **Բանալի** Ս. Գիրքը բանալու կամ դիւրին դասեր (1879, Բ. տիպը 1886 ին: ** Այնուհետեւ ամերիկահայ գաղութը տարուէ տարի կ'աճի, մանաւանդ Տաճկաստանի հայաջինջ կոտորածներէն վերջ՝ մեծ հոսանք մը կը խուժէ Նոր Աշխարհ, կեանքի, ինչքի և պատիւի տեսակէտէ զլխովին անքոյր: Բնական էր որ այդ բախտաւական զանգուածն իր մէջ բուէր զանազան յեղ. կուսակցութիւններու ներկայացուցիչներ ալ որոնք — այլուր արդէն սկիզբ տուած հայ ազատագրութեան գործին — հետզհետէ իրենց «օռկաններ»ը կ'ունենան Ամերիկայի այս ու այն քաղաքներուն մէջ: 1890ական թուականի այդ արտազաղթէն առաջ՝

408. **Հ. Էկինեան Ճէրզի Սիթիի** մէջ կը հիմնէ տպարան մը, 1888 ին հրատարակելով **Արեգակ** թերթը որ անդրանիկն է ամերիկահայ լրագրութեան: 1889 ին՝ **Սուրհանդակ** որ տարի մը վերջ անուն փոխելով կ'ըլլայ **Ազատութիւն** և որ պզտիկ դադարներէ վերջ կը շարունակուի մինչեւ 1892: — Դարձեալ, Էկինեանի տպարանէն հրատարակուած են **Հայք** (1891-8, խմբ. Մ. Ս. Գաբրիէլեան), **Եփրատ** (1897, խմբ. Պ. Ս. Ճաղալեան), **Տիգրիս** (1897, խմբ. Էկինեան և Թ. Չարչաֆճեան), մինչ Նիւ-Եօրքի մէջ խմորատիպ լոյս ընծայուած կան Լուսնակ, Կայծակ, Շանթ, Հարուած եւն. թերթիկներն ալ: — Էկինեանի տպագրածներէն յիշենք **Կսկծանք** (Ա. տետր), **Դայլայլիկ** (1890), **Լոյս եւ խաւար** (1891): — Հ. Գափքանեան նոյն տարին **Մարգարան** մըն ալ կ'արձանագրէ իր ձեռագիր ցանկին մէջ:

409. **Տպ. Արարատեան.** — Փառնակ Այվատեան 1 Յնվր. 1891-1892ին կը հրատարակէ **Արարատ** թերթը (շարունակութիւնն իր հօր՝ Մատթէոսի Պոլսոյ մէջ 1876 ին լոյս ընծայած համանուն թերթին զոր թուրք կառավարութիւնը խափանած էր): Միեւնոյն տպարանէն 1892 ին ելած են **Բանալի անգլիերէն լեզուի**, Գրպանի բառարան (1905):